

**ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՈՏԻՎԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ²⁹**

*Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յ. (ԵՊՀ,
Երևան, Հայաստան)*

vpapoyan63@gmail.com, alagalstyan@gmail.com, dianasargsyan@ysu.am

Ներկայացման ամս.՝ 31.07.2019

գրախոսման ամս.՝ 04.08.2019

տպագրության ընդունման ամս.՝ 13.09.2019

Հոդվածում ներկայացված է սովորողների մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատման հետազոտություն, որի նպատակն է ուսումնասիրել նրանց սեփական գիտելիքների, ցանկությունների և մասնագիտական պահանջարկի փոխկապակցվածությունը: Հոդվածում ամփոփ ներկայացված են կատարված հետազոտության արդյունքները, որոնք փաստում են, որ մեր կողմից հետազոտված ավարտական դասարանի 70 սովորողների մոտ բարձր է ընդհանուր մոտիվացվածությունը, ինքնուրույնությունը, հստակ են իրենց կենսական որոշումներում, բայց մասնագիտության ընտրության հարցում պատկերացումները թույլ են սեփական գիտելիքների, ցանկությունների իրատեսական գնահատման և նախընտրելի մասնագիտությունների վերաբերյալ: Պարզ դարձավ նաև, որ մասնագիտության ընտրության շեմին հայտնված սովորողներից շատերը մասնագիտությունների մասին ամբողջական պատկերացումներ չունեն: Ստացվածը թույլ է տալիս կատարել եզրակացություն, որ սովորողներին ուսման համապատասխան փուլերում չեն տրվում մասնագիտությունների վերաբերյալ համակարգված պատկերացումներ, ինչն էլ խոչընդոտում է մասնագիտական ինքնորոշման և ընտրության հարցը:

Հանգուցային բառեր՝ սովորող, մասնագիտական ինքնորոշում, մոտիվացիա, նախասիրություն:

Անձի մասնագիտական ինքնորոշման և ուղղորդման հիմնախնդիրը բոլոր ժամանակներում էլ չի կորցնում իր արդիականությունը և մնում է հոգեբանների ուշադրության կենտրոնում: Մասնագիտական հմտությունների ձևավորումը և մասնագիտության մեջ անձի կայացումը, որպես անձի ինքնազարգացման պահանջմունք, նպաստում է մասնագիտացմանը, աշխատանքային գործունեության մեջ աճին: Սակայն դժվար է անդրադառնալ այս հարցերին, առանց մասնագիտական ինքնորոշման և ուղղորդման հնարավորությունների մեկնաբանման:

²⁹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳՊԿ «18Տ-5A056» ծածկագրով թեմայի ֆինանսական աջակցությամբ:

Ներկա ժամանակաշրջանում գրեթե բոլոր կրթական հաստատություններում շարունակական կրթության պայմաններում բացակայում են նպատակաուղղված, համակարգված մասնագիտական ինքնորոշմանն ուղղված հոգեբանական աշխատանքները [3], որոնք իրենց հիմքում դնում են անձի պահանջմունքների և հնարավորությունների գնահատումը ոչ միայն նրա մասնագիտական ինքնորոշման, այլ նաև հաշվի են առնվում աշխատաշուկայում տվյալ մասնագիտության պահանջարկներն ու դրանց ներկայացվող աշխատանքային չափորոշիչները [6]:

Սոցիալական ինստիտուտների համակարգված և համալիր փոխգործունեության բացակայությունը այս հարցում առաջ է բերում անձի մասնագիտական ինքնիրացման և ինքնորոշման հոգեբանական ուղղորդման նոր տեխնոլոգիաների մշակման և դրանց կիրառական լայն հնարավորությունների ներդրման անհրաժեշտություն: Մասնագիտական ինքնորոշման հիմնախնդրի լուծման կարևորությունը կայանում է նրանում, որ հոգեբանական ուղղորդման գործընթացի արդյունավետ կազմակերպումը ընդհանուր կրթության համակարգում գործնական մի շարք բարեփոխումների կհանգեցնի:

Սովորողների մասնագիտական ուղղորդման հոգեբանական տեխնոլոգիաների մշակման հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև աշխատաշուկայում տեղի ունեցող արագընթաց փոփոխությունների և մասնագետների պատրաստման գործընթացի միջև հակասության առկայությամբ: Մի կողմից ժամանակակից աշխատաշուկան բնութագրվում է համապատասխան մասնագետի պահանջների ոչ հստակ չափորոշիչներով, իսկ մյուս կողմից դպրոցի շրջանավարտներից միայն որոշներն են կողմնորոշված մասնագիտության ընտրության հարցում: Մյուսները կարիք ունեն մասնագիտական խորհրդատվության և մասնագիտության ընտրության ուղղորդման, որպեսզի սովորողների մոտ ամբողջական դառնա մասնագիտությունների աշխարհի մասին պատկերացումները և օգնենք նրանց ոչ միայն կողմնորոշվեն իրենց ապագա մասնագիտական գործունեության մեջ, այլ նաև հասկանան, թե ինչպես կարելի ձեռք բերել հետագա մասնագիտական աճի և գործունեության համար հոգեբանական մասնագիտական ինքնորոշման ուղղորդում [3, էջ 16-33]:

Միևնույն ժամանակ տեսական և գործնական հարթակում այդքան էլ պարզ չեն սովորողի անձի հոգեբանական ուղղորդման տեխնոլոգիաները, որոնք կնպաստեն պատանիների մասնագիտական ինքնորոշմանը: Այս համակարգում առանձնակի դեր ունեն ոչ միայն կրթական պայմանները, ծրագրերը, դասավանդման համակարգը և սովորողների առջև դրված կրթության որակի պահանջները, այլ նաև սովորողի անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր շրջանավարտ, մտածելով իր ապագայի մասին, առաջին հերթին որոշում է, թե ինչ մասնագիտություն ընտրի: Կյանքի այդ առանձնահատուկ շրջանում հոգեբաններն անքակտելի ծառայություն կմատուցեն դեռահասներին, եթե օգնեն նրանց տիրապետել ինքնուրույն մասնագիտություն ընտրելու հմտություններին: Սովորողներին պետք է տալ հնարավորություն, որ հենց իրենք ընտրեն իրենց համար ցան-


կալի՝ այսպես ասած ապագայի կերպարը, ինչու չէ՝ կիրառելով մասնագիտություն ընտրելու հայտնի բանաձևը՝ «Ուզում եմ», «Կարող եմ», «Պետք է» [4]:

Մասնագիտության ինքնուրույն և պատասխանատու ընտրությունը դիտարկվում է որպես կենսական ինքնորոշման հետևանք ու մասնավոր դեպք: Երբ խոսում ենք մասնագիտական ինքնորոշման մասին, ապա դրա տակ միշտ ի նկատի ենք ունենում նաև կենսական ինքնորոշումը: Մասնագիտության ճիշտ ընտրության հիմքում ընկած է անձի անհատական-տիպաբանական առանձնահատկությունների իմացությունը և դրանց հետ սովորողի ապագա մասնագիտության համապատասխանություններ գտնելու կարողությունը (հետազոտություններին առավել մանրամասն ծանոթանալու համար տե՛ս [1, 55-86 էջեր]):

Վերջին տարիներին մեր աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են մասնագիտական ինքնորոշման, ապագա մասնագետի ինքնուրույնության և կուպետենտության հոգեբանական առանձնահատկությունները, մշակվել են հոգեբանական խթանման մոտեցումներ, մեթոդիկաներ, վարժանքներ և տեխնիկաներ, տպագրվել են հոդվածներ և ձեռնարկներ, մեթոդական ուղեցույց: Շարունակական հետազոտությունները նորանոր հիմնախնդիրներ են առաջադրում մասնագիտական ինքնորոշման շուրջ ուսումնասիրությունների համար: Նախորդ հետազոտությունները ցույց են տվել, որ տարակարծություն կա սովորողների պատկերացումների և ցանկությունների, նրանց կողմից նախընտրելի առարկաների և այդ առարկաների իմացության մակարդակի միջև: Այս տարակարծությունը ուսումնասիրելու նպատակով իրականացրել ենք հետազոտություն՝ պարզելու սովորողների առարկայական նախասիրության և ուսման մոտիվացիայի միջև կապը: Հետազոտության համակազմում ընդգրկվել են 70 ավագ և միջին դպրոցականներ ՀՀ տարբեր դպրոցներից: Հետազոտության մեթոդական փաթեթը նախորդ տարիներին հաստատվել է ՀՀ ԿԳՆ կողմից, դրանք ոչ միայն հոգեբանության մեջ կիրառվող և տեղայնացված հայտնի մեթոդիկաներ են, այլ նաև մեր հետազոտական խմբի կողմից մշակված հարցարաններ և թեստեր [2]:

Հետազոտության արդյունքներից նախ անդրադառնանք հարցմանը, որն ուղղված էր մասնագիտության ընտրության հարցում ներքին և արտաքին գործոնների ազդեցության գնահատմանը: Այն սովորողները, ովքեր մասնագիտությունը ընտրում են ելնելով ընտանեկան նախասիրություններից (շարունակելով ծնողների մասնագիտությունը), առավել հստակ են իրենց առարկայական նախասիրություններում, ինքնուրույն են, կարելի է ասել գիտեն, թե ինչ են սովորում և ինչի համար: Իսկ այն դպրոցականները, որոնց մոտ մասնագիտության ընտրությունը միջավայրային գործոններով էր պայմանավորված (բուհի, ընկերների, մասնագիտության ռեյտինգի և այլն), նախասիրությունները համընկնում էին մոտիվացվածության հետ: Առարկայական գիտելիքների և նախընտրության ռանգային գնահատման արդյունքում կոռելյացիայի գործակիցը վկայում է նկատելի տարբերությունների մասին ($r=0.67$, $P<0.001$), հատկապես ֆիզիկա, պատմություն, օտար լեզու, գրականություն և հայոց լեզու առարկաների միջև (տե՛ս նկար 1.): Ստացվում է, որ սովոր-

րողները նախընտրում են իրենց ապագա մասնագիտության համար առարկաներ, որոնց այդքան էլ լավ չեն տիրապետում, կամ բավարար գիտելիքներ ունեն օրինակ ֆիզիկայից, բայց ֆիզիկոս և դրան հարակից մասնագետ չեն ցանկանում դառնալ: Այլ կերպ ասած՝ գիտելիքները չեն ծառայում նախընտրած մասնագիտությանը:



Նկ. 1. Առարկաների նախասիրության և տվյալ առարկայի իմացության ունեցողի տարբերությունները

Առավել հակասական է մասնագիտությունների ընտրության հարցը: Սովորողները գնահատել են բազմաթիվ մասնագիտություններ պահանջված, շատ ցանկալի և նախընտրելի, բայց իրենց ոչ պատկերացումներն են այդ մասնագիտության մասին բավարար եղել, ոչ գիտելիքները, ոչ կարողությունը, և որ ամենակարևորն է մոտիվացվածությունը ուսման և ուսումնական հաջողությունների հանդեպ բավական ցածր է:

Ուսումնական մոտիվացիայի գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնական մոտիվացիայի ցածր մակարդակը սովորողների մոտ կազմել է՝ 43%, այսինքն տվյալ ուսումնասիրվողների մոտ արտաքին դրդապատճառները ակնհայտորեն գերազանցում են ներքին դրդապատճառներին, ուսումնական գործընթացում ձգտում են խուսափել անհաջողություններից և դա գերակայում է հաջողության հասնելու դրդապատճառի նկատմամբ, ուսումնական դրդապատճառները վարքում չեն դրսևորվում: Ուսումնական մոտիվացիայի միջին մակարդակը կազմել է 30%, այսինքն տվյալ ուսումնասիրվող աշակերտների մոտ արտահայտված են ինչպես ներքին այնպես էլ արտաքին դրդապատճառները, ինչպես հաջողության հասնելու, այնպես էլ անհաջողությունից խուսափելու դրդապատճառները, ուսումնական դրդապատճառները հազվադեպ են դրսևորվում վարքում: Ուսումնական մոտիվացիայի բարձր մակարդակը կազմել է 27%: Այս մակարդակում գտնվող աշակերտների

մոտ կարող ենք եզրակացնել, որ ներքին դրդապատճառները գերազանցում են արտաքինին, և ուսումնական գործընթացում ձգտում են հասնել հաջողությունների:

Անձի հոգեբանական գնահատման տեսանկյունից սովորողի կրթական նպատակների ձևավորման գործընթացի փուլային հեռանկարն իր մեջ ներառում է մոտակա իրագործելի նպատակներից մինչև ապագայի երազանքը՝ որպես գերնպատակ: Հաշվի առնելով «Ես-կոնցեպցիայի» հիմնական բաղադրիչները, կարևորում ենք իրական և ռեֆլեքսիվ Ես-ով պայմանավորված սովորողի անձի մասնագիտական կերպարի նույնականացումը, որում դեր են խաղում ուսումնառության տարիներին սեփական հնարավորությունների, կարողությունների գիտակցման և ձեռք բերած գիտելիքների հանդեպ ձևավորված պատկերացումները և վերաբերմունքը: Կրթության որևէ փուլի ավարտը առաջադրում է նոր ընտրություն, շարունակելության նոր գիտակցում և նոր նպատակ, որը հետագայում ծառայելու է մասնագիտական պատրաստմանը, աշխատանքային գործունեությանը:

Այսպիսով, կարող ենք ընդհանրացնել, որ սովորողների մոտ հստակ ձևավորված չեն սեփական գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու ունակությունները: Ինքնաձևանաչման և ինքնաբացահայտման հատկությունները չեն ներդրվում ապագայի պլանավորման և մասնագիտական աճի մոդելավորման հարցում՝ սովորողները հստակ չեն իրենց ցանկություններում, նպատակներում և ձգտումներում, անհամապատասխանություն է նկատվում իրենց առարկայական նախասիրության և ապագա մասնագիտական ինքնորոշման միջև: Սրան ի հակադրություն դպրոցական տարիքի սովորողների մոտ կենսական մոտիվացիան բարձր է, ձգտում են հաջողությունների, ինքնուրույն են, նախաձեռնող, ակտիվ և կենսական ուժով լի, սակայն այս ներուժը համապատասխանաբար ուղղորդված չէ ուսման գործընթացին: Կրթություն ստանալու փուլում անձը դեռևս չունի ձևավորված պատկերացումներ ապագա մասնագետի կերպարի և գործունեության մասին: Հոգեբանական աջակցության և ուղղորդման առաջնային նպատակն է ձևավորել սովորողների մոտ ադեկվատ ինքնագնահատում, սեփական հավակնություններն ու կարողությունները ինքնուրույն գնահատելու կարողություն, որի շնորհիվ անձի մոտ կձևավորվեն իրատեսական պատկերացումներ մասնագիտական պատրաստման գործընթացի վերաբերյալ:

Գրականություն

1. Անձի ինքնիրացման հիմնախնդիրները: Ուսումնասօժանդակ ձեռնարկ / **Վ. Ռ. Պապոյան, Է. Ա. Գրին, Ա. Ս.** Գալստյան և ուրիշներ, Եր.: ԵՊՀ հր., 2011, 102 էջ
2. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում // մեթոդական ուղեցույց, կազմողներ՝ **Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յու. Սարգսյան, Ե. Բ. Մուրդայան** // Եր., ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ:

3. Մասնագիտական ինքնորոշման և կայացման հոգեբանական ուղղորդումը կրթական համակարգում // նյութերի ժողովածու, հեղ. Վ. Պապոյան, Ա. Գալստյան, Ե. Մուրադյան, Դ. Սարգսյան // Եր., ԵՊՀ հրատ., 2015, 76 էջ
4. Зеер Э. Ф., Павлова А. М., Садовникова Н. О. Профориентология: Учеб. пособие для высшей школы, М., 2006, с.12
5. Зинченко В. П. Как построить свое «Я» / Под ред. - М.: Педагогика, 1991. - 136 с.
6. Мальцева Т. В., Реуцкая И. Е. Профессиональное психологическое консультирование: учеб. пособие. – М.: ЮНИТИ-ДАНА, 2009. – 143 с.

СВЯЗЬ ПРЕДМЕТНОГО ПРЕДПОЧТЕНИЯ И МОТИВАЦИИ УЧАЩИХСЯ В ПРОЦЕССЕ ПРОФЕССИОНАЛЬНОГО САМООПРЕДЕЛЕНИЯ

Папоян В.Р., Галстян А.С., Саргсян Д. Ю. (ЕГУ, Ереван, Армения)

Статья посвящена психологическому оцениванию профессионального самоопределения учащихся, целью которого является исследование взаимосвязи собственных знаний, желаний и профессиональной востребованности. В статье обобщенно представлены результаты исследования, которые свидетельствуют о том, что среди нами исследуемых респондентов (70 человек) высоки мотивированность, самостоятельность, конкретны их жизненные решения. Однако их представления для выбора профессии слабы из-за собственных знаний, реалистичных желаний и предпочтений. Стало ясно, что многие из учащихся, которые оказались на пороге выбора профессии, не имеют представления о профессиях. Полученные данные позволяют сделать заключение, что на соответствующих этапах обучения учащиеся не получают систематизированное представление относительно профессий, что в свою очередь затрудняет вопрос выбора и профессионального самоопределения.

Ключевые слова: *учащийся, профессиональное самоопределение, мотивация, предпочтение.*

RELATIONSHIP OF SUBJECT PREPARATION AND MOTIVATION OF STUDENTS IN THE PROCESS OF PROFESSIONAL SELF-ORIENTATION

Papoyan V. R., Galstyan A. S., Sargsyan D. Yu. (YSU, Yerevan, Armenia)

The article is dedicated to the psychological assessment of students' professional self-orientation, the purpose of which is to study the correlation between their own knowledge, desires and professional relevance. The article summarizes the results of

the study showing that the surveyed respondents (70 people) are highly motivated, independent and their life decisions are specific. However, their concepts of choosing a profession are weak due to their knowledge, faithful desires and preferences. It was obvious that many of the students who were on the threshold of choosing a profession had no idea about the professions. The data obtained allow us to conclude that students do not get efficient awareness of professions at the relevant stages of training, this, in its turn makes the choice and professional self-orientation difficult.

Keywords: *student, professional self-orientation, motivation, preference.*